

Իմացաբանական այս ոլորտէն ներս, պէտք է քննարկել նաեւ բարոյական ներհմութեան կամ ներհայեցողութեան (Intuition) դերը՝ բարոյական փաստարկման ատեն: Արդեօք կարելի՞ է բարոյական դատողութիւններու առնչութեամբ, ընդհանրապէս, մեր ներհայեցողութեան վստահիլ: Այս մասին տե՛ս նաեւ «Բարոյագիտութեան Հիմնական Հասկացութիւններ» Մաս – 9ի յատուկ յօդուածը (Էջ 508):

Ամէն պարագայի, մեր բարոյական դատողութիւններուն առնչութեամբ որոշիչ դեր կը խաղան իմացաբանական երկու հիմնական ուղղութիւններ՝ *ճանաչողականութիւնը* (Cognitivism) եւ ասոր հակադիր՝ *ոչ-ճանաչողականութիւնը* (Non-Cognitivism): Բնականաբար, այստեղ շատ կարեւոր դեր ունի նաեւ՝ *տրամաբանութիւնը* (Logics), որպէս միջոց իմացաբանական գործընթացին:

Մետա-բարոյագիտութիւնը, իմացաբանական ոլորտէն անդին, կը զբաղի նաեւ բարոյագիտութեան տեսութիւններու գիտական կարելիութիւններով, անոնց հիմնաւորումով ու կառոյցով, ինչպէս պիտի տեսնենք՝ յաջորդող երկու մասերուն մէջ.- Մաս – 4՝ «Բարոյագիտութեան Հիմնաւորումը» (Էջ 139) եւ Մաս – 5՝ «Բարոյագիտութեան Տեսութիւնները» (Էջ 156):

➤ **Ոչ-ճանաչողականութիւն**

Ոչ-ճանաչողականութեան համաձայն, (կանոնական) բարոյագիտութիւնը երբեք մատչելի չէ՝ գիտական իմացաբանութեան համար: Այս իմաստով, չկան բարոյական համոզումներ ու բարոյական իրողութիւններ եւ այստեղ կարելի չէ ճշդել՝ բարոյական դատողութիւններու սխալականութիւնը, անոնց *ճիշդ* կամ *սխալ* ըլլալը: Ոչ-ճանաչողականութեան ուղին մեզ կ'առաջնորդէ դէպի վերոյիշեալ *հակա-իրապաշտութիւնը*:

Այս իմաստով, սկոտլանդացի փորձագէտ-փիլիսոփայ **Դ. Հյում** (David Hume, 1711 – 1776 թ.) բարոյագիտութեան ճանաչողական կարողութիւնը կը հերքէր, որովհետեւ (Հյումի համաձայն) բարոյական համոզումները չեն ենթարկուիր տրամաբանական-մաթեմատիկական քննարկման: Ծիշդ այս պատճառով, Դ. Հյումի հետ համակարծիք է նաեւ ամերիկացի բարոյագէտ-փիլիսոփայ **Չ. Լ. Ստիվենսոն** (Charles Leslie Stevenson, 1908 – 1979 թ.), որ 20-րդ դարու մետա-բարոյագիտութեան նշանաւոր ներկայացուցիչներէն մէկը կը նկատուի:

Ոչ-ճանաչողականութեան համաձայն, բարոյական կանոնները անելի առնչուած են մարդու նկարագրին: Այլ խօսքով, կարելի է դաստիարակութեան ճամբով ու վարժութիւններով բարոյական արժէքները սովորութիւններու վերածել:

Ոչ-ճանաչողական դիրքաւորման լաւագոյն օրինակը յուզապաշտութիւնն է, զոր պիտի մանրամասնենք ստորեւ:

ՅՈՒՋԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ